

**Էլեյն Ս. Դալտոն**
Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահ

# Հիշեք, թե ով եք դուք

*Չկա ավելի գեղեցիկ տեսարան, քան երիտասարդ կին, որը շողում է Հոգու լույսով, որը վստահ է և քաջ, որովհետև նա առաքինի է:*

Մենք մեր Երկնային Հոր դուստրերն *ենք*: Նա սիրում է մեզ և մենք սիրում ենք Նրան:[1] Ես ինձ խոնարհված և երախտապարտ եմ զգում, ձեզ հետ լինելով, որովհետև Տերն օրհնել է ինձ շատ հստակ ըմբռնմամբ, թե ովքեր եք դուք և ինչու եք այստեղ՝ երկրի վրա, այս ժամանակաընթացքում: Տերը սիրում է ձեզ և ես գիտեմ, որ դուք էլ Նրան եք սիրում: Այն երևում է ձեր դեմքերին, ձեր համեստության մեջ, ճիշտն ընտրելու ձեր ցանկության մեջ և առաքինի և անբիծ մնալու ձեր պարտավորվածության մեջ:

Մենք միասին հրաշալի հոգևոր պահեր ենք անցկացրել: Մենք ճամբարի խարույկների շուրջը վկայություն ենք բերել՝ ճամբարներում, ժողովատեղերում և հավաքներում: Մենք ջերմացվել ենք մեր հավատքի կրակով: Մենք մագլցել ենք լեռներ և բացել ոսկեգույն դրոշներ՝ Բրազիլիայից սկսած մինչև Բաունթիֆուլ, դրսևորելով խորը պարտավորվածություն մեր սրտերում՝ մնալու առաքինի և միշտ արժանի՝ տաճար մտնելու: Մենք աղոթել ենք, կարդացել Մորմոնի Գիրքը և ժպտացել ամեն օր, և մեր մայրերի, տատիկների և ղեկավարների հետ միասին մենք աշխատում ենք Անձնական Զարգացման վրա: Եվ մենք միայն նոր ենք սկսել:

Սա երկրի վրա լինելու և երիտասարդ կին լինելու սքանչելի ժամանակ է: Մեր հեռանկարը մնում է նույնը: Այն է՝ արժանի լինել սրբազան ուխտեր կապելուն և պահելուն և տաճարային արարողություններ ստանալուն: Սա մեր զերնպատակն է: Եվ այսպիսով մենք կշարունակենք առաջնորդել աշխարհը վերադառնալու դեպի առաքինություն, վերադառնալու դեպի մաքրաբարոյություն և բարոյական անարատություն: Մենք կշարունակենք անել այն ամենը, ինչ կարող ենք՝ միմյանց օգնելու «կանգնել սուրբ տեղերում»[2] և ստանալու, ընդունելու և ապավինելու Սուրբ Հոգուն: Մենք կշարունակենք ուսուցանել, որ բոլորը կարող են ապաշխարել և վերադառնալ Փրկչի անսահման Քավության շնորհիվ:

Մենք կշարունակենք խոսել Քրիստոսի մասին, ցնծալ Քրիստոսով, որ



մեզանից յուրաքանչյուրն իմանա, թե ինչ աղբյուրի մենք դիմենք՝ մեր մեղքերի թողության համար:[3] Եվ այո, մենք կշարունակենք հաստատուն կանգնել, անկախ նրանից, թե ինչ փոթորիկներ կարող են մոլեգնել մեր շուրջը, որովհետև մենք գիտենք և վկայում ենք, որ «մեր Քավչի վեմի վրա է, որը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, որ [մենք] պիտի կառուցենք մեր հիմքը…. հիմք, որի վրա, եթե [մենք] կառուցենք, [մենք] չենք ընկնի»:[4]

Հեսուին ուղղված Տիրոջ խորհուրդը, Նրա խորհուրդն է ուղղված ձեզ այսօր, «արքայական ծագմամբ երիտասարդներին»:[5] «Զորացիր և քաջ եղիր, մի վախենար և մի զարհուրիր, որովհետև քո Տեր Աստուածը քեզ հետ է ամեն տեղ ուր որ գնաս»:[6] Դուք մենակ չեք: Չնայած դուք գուցե լինենք միակ Վերջին Օրերի Սուրբը ձեր դպրոցում կամ ձեր ընկերների խմբում կամ, նույնիսկ, ձեր ընտանիքում, դուք մենակ չեք: Դուք կարող եք ապավինել Տիրոջ ուժին: Ինչպես Հեսուն ասաց Իսրայելացիներին. «Սրբեցեք ձեր անձերը. Որովհետև Տերը էգուց ձեր միջումը հրաշքներ է անելու»:[7] Սա Հեսուի կոչն էր՝ դեպի առաքինություն դառնալու և այդ նույն կոչն ուղղված է մեզ այսօր: Մենք պարզապես չենք կարող անել այն աշխատանքը, որի համար մենք պահվել ենք և նախապատրաստվել, որ անենք, մինչև մենք չկարողանանք հասնել այն ուժին և վստահությանը, որը գալիս է առաքինի կյանքով ապրելուց:

Դուք մեծ հավատքով երիտասարդ կանայք եք: Դուք բերեցիք ձեզ հետ ձեր հավատքը, երբ աշխարհ եկաք: Ալման սովորեցնում է, որ նախամահկանացու աշխարհում դուք ցույց եք տվել «խիստ մեծ հավատք ու բարի գործեր»:[8] Դուք կռվել եք ձեր հավատքով և վկայությամբ պաշտպանելու ծրագիրը, որը ներկայացվեց Աստծո կողմից: Դուք գիտեիք, որ ծրագիրը լավն էր և գիտեիք, որ Փրկիչը կկամենար և կկարողանար անել այն, ինչ ասել էր, որ կաներ, որովհետև դուք գիտեիք Նրան: Դուք կանգնած էիք Նրա հետ և դուք ձգտում էիք երկիր գալու ձեր հնարավորությանը: Դուք գիտեիք, թե ձեզանից ինչ էր



պահանջվում: Դուք գիտեիք, որ դժվար էր լինելու և, այնուամենայնիվ, դուք վստահ էիք, որ դուք ոչ միայն կկարողանայիք իրականացնել ձեր աստվածային առաքելությունը, այլ որ կկարողանայիք տարբերություն մտցնել: Դուք «ընտրյալ հոգիներ եք, որոնք պահվել էին առաջ գալու ժամանակների լրության մեջ, որպեսզի մասնակցեն վերջին օրերի մեծ աշխատանքի հիմնադրմանը, այդ թվում տաճարների կառուցմանը և նրանցում արարողությունների կատարմանը»:[9]

Իսկ այժմ դուք այստեղ եք՝ անելու այն, ինչի համար պահվել եք ու նախապատրաստվել անելու: Երբ նայում եմ ձեզ, մտածում եմ, արդյո՞ք այսպիսին չպետք է լինեին Հելամանի պատանի ռազմիկների ընկերուհիները: Զարմանալի չէ, որ սատանան մեծացրել է իր հարձակումների ուժգնությունը ձեր ինքնության և առաքինության վրա: Եթե ձեզ կարողանան շփոթեցնել, հուսահատեցնել, շեղել, ուշացնել կամ որակազրկել Սուրբ Հոգու առաջնորդությունը ստանալուց կամ Տիրոջ սուրբ տաճարը մտնելուց, ապա նա հաղթում է:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Երիտասարդ կանայք, հիշեք, թե ով եք դուք: Դուք ընտրված եք: Դուք Աստծո դուստրերն եք: Դուք չեք կարող լինել երիտասարդ կանանց մի սերունդ, ովքեր հակված են «հարմարվելու»: Դուք պետք է քաջություն ունենաք «չհանձնվելու», «վեր կացեք և շողացեք, որպեսզի ձեր լույսը չափանիշ լինի բոլոր ազգերի համար»:[10] Աշխարհը կկամենա հավատացնել ձեզ, որ դուք ժամանակակից չեք և անտեղյակ եք: Աշխարհը կանչում է ձեզ չթուլացող, աղմկոտ ձայներով «վայելել», «փորձել ամեն ինչ», «փորձարկել և երջանիկ լինել»: Ճիշտ հակառակը, Սուրբ Հոգին շշնջում է և Տերը հրավիրում է ձեզ «քայլել առաքինության շավիղներում…. մի կողմ դնել այս աշխարհի բաները…. և հավատարիմ մնալ [ձեր] ուխտերին»:[11]

Ես միշտ սիրել եմ Ֆրանսիայի Լուի XVI թագավորի որդու պատմությունը, որովհետև նա անսասան գիտելիք ուներ իր ինքնության վերաբերյալ: Պատանի հասակում նրան առևանգել էին չար մարդիկ, որոնք գահազրկել էին նրա հորը՝ թագավորին: Այդ մարդիկ գիտեին, որ եթե իրենք կարողանային նրան բարոյապես կործանել, նա չէր լինի գահի ժառանգորդը: Վեց ամիս շարունակ նրանք ենթարկեցին նրան ամեն նենգ բաների, որոնք կյանքը կարող էր առաջարկել, սակայն նա երբեք չհանձնվեց այդ ճնշմանը: Դա զարմացրեց նրա առևանգիչներին և ամեն ինչ անելուց հետո, նրանք հարցրեցին, թե ինչու նա այդպիսի մեծ բարոյական ուժ ուներ: Նրա պատասխանը պարզ էր. «Ես չեմ կարող անել այն, ինչ դուք խնդրում եք, քանի որ ես ծնվել եմ թագավոր լինելու համար»:[12]

Թագավորի որդու պես, ձեզանից յուրաքանչյուրը ժառանգել է արքայական ծագում: Ձեզանից յուրաքանչյուրը աստվածային ժառանգություն ունի: «Դուք բառացիորեն մեր Երկնային Հոր արքայական դուստրերն եք»:[13] Ձեզանից յուրաքանչյուրը ծնվել է թագուհի լինելու համար:

Երբ ես հաճախում էի Բրիգամ Յանգի համալսարան, ես հասկացա, թե ինչ էր իրականում նշանակում թագուհի լինել: Ինձ մի անզուգական հնարավորություն տրվեց հանդիպելու մարգարե, Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյին: Ինձ ասվեց, որ հագնեի իմ լավագույն զգեստը և պատրաստ լինեի ճանապարհորդելու հաջորդ վաղ առավոտյան դեպի մարգարեի տուն՝ Հանթսվիլ, Յուտա: Ես երբեք չեմ մոռանա այդ փորձառությունը: Հենց տուն մտանք, ես զգացի հոգին, որով լցված էր այդ տունը: Մեզ նստացրեցին մարգարեի հյուրասենյակում նրա շուրջը: Նախագահ Մակքեյը սպիտակ կոստյում էր հագել, իսկ նրա կողքին նստած էր նրա կինը: Նա խնդրեց մեզանից յուրաքանչյուրին առաջ գալ և պատմել իր մասին: Երբ ես առաջ եկա, նա



մեկնեց իր ձեռքը և բռնեց իմը և երբ ես պատմում էի իմ կյանքի և իմ ընտանիքի մասին, նա խորը նայեց աչքերիս մեջ։

Երբ ես վերջացրեցի, նա ետ հենվեց իր աթոռին և բռնեց իր կնոջ ձեռքն ու ասաց. «Այժմ երիտասարդ կանայք ես կկամենայի, որ դուք ծանոթանաք իմ *թագուհու* հետ»։ Այնտեղ նրա կողքին նստած էր նրա կինը Էմմա Ռեյ Մակքեյը։ Չնայած նա չէր կրում փայլուն ադամանդներով թագ, ոչ էլ նստած էր գահի վրա, ես *գիտեի*, որ նա իսկապես թագուհի էր։ Նրա ճերմակ մազերը իր թագն էին և նրա վճիտ աչքերը փայլում էին գոհարների պես։ Երբ Նախագահը և Քույր Մակքեյը խոսում էին իրենց ընտանիքի և իրենց միասին անցկացրած կյանքի մասին, նրանց միահյուսված ձեռքերը պատմում էին նրանց սիրո հատորների մասին։ Նրանց դեմքերից ուրախություն էր ճառագում։ Նրա գեղեցկությունը չէր կարող գնվել։ Այն գալիս էր տարիներ շարունակ լավագույն պարգևների ձգտելուց, լավ կրթություն ստանալուց, ուսումնասիրության միջոցով գիտելիք փնտրելուց և նաև հավատքից։ Այն գալիս էր տարիների ծանր աշխատանքից, լավատեսությամբ փորձությունները հաղթահարելուց, վստահությունից, ուժից և քաջությունից։ Այն գալիս էր իր ամուսնու, իր ընտանիքին և Տիրոջը անսասան նվիրումից և հավատարմությունից։

Այդ աշնանային օրը Հանթսվիլում, Յուտա, ինձ հիշեցվեց իմ աստվածային ինքնության մասին և ես սովորեցի այն մասին, որն ես այժմ կոչում եմ «խորը գեղեցկություն», այնպիսի գեղեցկություն, որը շողում է *ներսից* դուրս։ Դա այնպիսի գեղեցկություն է, որը հնարավոր չէ նկարել, ստեղծել վիրահատությամբ կամ գնել։ Դա այնպիսի մի գեղեցկություն է, որը չի անհետանում։ Դա *հոգևոր* հմայք է։ Խորը գեղեցկությունը բխում է առաքինությունից։ Դա կուսական և բարոյապես մաքուր լինելու գեղեցկությունն է։ Դա այնպիսի գեղեցկություն է, որ դուք տեսնում եք առաքինի կանանց աչքերում, ինչպիսին է ձեր մայրը կամ տատիկը։Դա մի գեղեցկություն է, որը վաստակվում է հավատքի, ապաշխարության և ուխտերը հարգելու միջոցով։

Աշխարհը այնքան մեծ շեշտադրում է դնում ֆիզիկական գրավչության վրա և կամենում, որ դուք հավատաք, որ պետք է նման լինեք ամսագրի կազմի վրայի խաբուսիկ մոդելին։ Տերը կասեր ձեզ, որ ձեզանից յուրաքանչյուրը անզուգականորեն գեղեցիկ է։ Երբ դուք առաքինի եք, կուսական և բարոյապես մաքուր, ձեր ներքին գեղեցկությունը փայլում է ձեր աչքերում և ձեր դեմքին։ Պապս հաճախ էր ասում. «Երբ մոտիկ եք ապրում Աստծուն և Նրա անսահման շնորհին, դուք պետք չէ, որ ասեք, այն երևում է ձեր դեմքին»։[14] Երբ դուք արժանի եք Սուրբ Հոգու ընկերակցությանը, դուք վստահ եք և ձեր ներքին գեղեցկությունը փայլում է պայծառորեն։ Եվ ուրեմն, «թող առաքինությունը զարդարի քո մտքերն անդադար. այն ժամանակ քո վստահությունը կամրանա Աստծո ներկայության մեջ [և]… Սուրբ Հոգին կլինի քո մշտական ընկերը»։[15]

Մեզ ուսուցանվել է, որ «Սուրբ Հոգու պարգևը…։ արթնացնում է բոլոր մտավոր կարողությունները, մեծացնում, լայնացնում, տարածում և սրբագործում բոլոր բնական կրքերն ու զգացումները…։ Այն ոգեշնչում է առաքինություն, բարություն, քնքշանք, մեղմություն և գթություն։ *Այն ընդգծում է անձնավորության տեսքն ու դիմագծերի գեղեցկությունը*»։[16] Դա գեղեցկության մեծ գաղտնիք է։ Դա այն գեղեցկությունն է, որ ես տեսա մարգարեի տանը։ Այդ օրը ես հասկացա, որ Քույր Մակքեյի մեջ իմ տեսած գեղեցկությունը, այն գեղեցկությունն է, որն իսկապես կարևոր է և գեղեցկության միակ տեսակն է, որը հարատև է։

Ալման ուղղում է խորաթափանց հարցեր մեզանից յուրաքանչյուրին՝ խորհելու համար. «Ընդունե՞լ եք դուք նրա պատկերը ձեր դեմքին»։[17]

Վերջերս երիտասարդ կանանց մի խումբ այցելեց իմ գրասենյակ։ Այցելության վերջում, երիտասարդ կանանցից մեկը արցունքն աչքերին խոստովանեց. «Ես երբեք ինձ գեղեցիկ չեմ համարել։ Ես միշտ ինձ շատ սովորական եմ զգացել։ Բայց այսօր, երբ ես ձեր գրասենյակում անցնում էի հայելու կողքով, ես նայեցի հայելու մեջ և տեսա, որ գեղեցիկ էի»։ Նա *գեղեցիկ էր*, որովհետև նրա դեմքը փայլում էր Հոգուց։ Նա տեսավ իրեն, ինչպես մեր Երկնային Հայրն է նրան տեսնում։ Նա ստացել էր Նրա պատկերը իր դեմքին։ Դա «խորը գեղեցկություն» է։

Երիտասարդ կանայք, նայեք հավերժության հայելուն։ Հիշեք, թե ով եք դուք։ Տեսեք ձեզ այնպես, ինչպես մեր Երկնային Հայրն է տեսնում ձեզ։ Դուք ընտրյալ եք։ Դուք ազնվական ծագում ունեք։ Ձեր աստվածային ժառանգության հետ կապված փոխզիջման մի գնացեք։ Դուք ծնվել եք թագուհի լինելու համար։ Ապրեք այնպես, որ արժանի լինեք տաճար մտնելու և ստանալու «այն ամենն, ինչ Հայրն ունի»։[18] Զարգացրեք խորը գեղեցկություն։ Չկա ավելի գեղեցիկ տեսարան, քան երիտասարդ կինը, որը շողում է Հոգու լույսով, որը վստահ է և քաջ,

որովհետև նա առաքինի է:

Հիշեք, որ դուք մեր Երկնային Հոր դուստրերն եք: Նա այնքան շատ է սիրում ձեզ, որ ուղարկեց Իր Որդուն ցույց տալու ձեզ ապրելու ճանապարհը, որպեսզի դուք կարողանաք մի օր վերադառնալ Նրա մոտ: Ես վկայում եմ, որ երբ դուք մոտենում եք Փրկչին, Նրա անսահման Քավությունը հնարավոր է դարձնում ձեզ համար ապաշխարել, փոխվել, մաքուր լինել և ստանալ Նրա պատկերը ձեր դեմքին: Նրա Քավությունը հնարավորություն կտա ձեզ ուժեղ լինել և քաջարի, եթե շարունակեք բարձրացնել ձեր դրոշը առաքինության համար: Դուք ոսկի եք: Դուք դրոշն *եք*:

Եվ այսպիսով ես եզրափակում եմ մեզանից յուրաքանչյուրին՝ Իր թանկագին դուստրերին ուղղված Տիրոջ խոսքերով. «Ահա … դու մի ընտրյալ տիկին ես, որին ես [ընտրել եմ][19]…. քայլիր առաքինության շավիղներում …. մի կողմ դիր այս աշխարհի բաները…. հավատարիմ մնա [քո] ուխտերին…. և արդարության պսակը կստանաս դու»:[20] Այս մասին ես բերում եմ իմ վկայությունը մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. See "Young Women Theme," *Young Women Personal Progress* (2009), 3.
2. Վարդապետություն և Ուխտեր 87.8:
3. Տես 2 Նեփի 25.26:
4. Հելաման 5.12:
5. "Carry On," *Hymns,* no. 255.
6. Հեսու Ա.9:
7. Հեսու Գ.5; տես նաև Guide to the Scriptures, "Sanctification," scriptures.lds.org:
8. Ալմա 13.3:
9. Վարդապետություն և Ուխտեր 138.53–54:
10. Վարդապետություն և Ուխտեր 115.5:
11. Վարդապետություն և Ուխտեր 25.2, 10, 13:
12. See Vaughn J. Featherstone, "The King's Son," *New Era,* Nov. 1975, 35.
13. Ezra Taft Benson, "To the Young Women of the Church," *Ensign,* Nov. 1986, 85.
14. Անհայտ հեղինակ; տես Elaine S. Dalton, "It Shows in Your Face," *Liahona,* May 2006, 109:
15. Վարդապետություն և Ուխտեր 121.45–46:
16. Parley P. Pratt, *Key to the Science of Theology,* 10th ed. (1965), 101; շեշտադրումն ավելացված է:
17. Ալմա 5.14:
18 Վարդապետություն և Ուխտեր 84.38:
19. Վարդապետություն և Ուխտեր 25.3:
20. Վարդապետություն և Ուխտեր 25.2,10,13,15:

# Վիդեո-Ներկայացում. Ես Նպատակ ունեմ

*Ստորև տրվում է 2010թ. մարտի 27-ին Երիտասարդ Կանանց գերագույն ժողովին ցուցադրված վիդեո-ներկայացման տեքստը:*

**Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն.** «Բացի այդ, իմ սիրելի երիտասարդ քույրեր, թեպետ միշտ եղել են դժվարություններ աշխարհում, դրանցից շատերը, որոնց դուք կհանդիպեք, յուրահատուկ են այս օրերի համար»:[1]

**Էլեյն Ս. Դալտոն, Երիտասարդ Կանանց գերագույն Նախագահ.** «Որպեսզի առաքինի լինեք և առաքինի մնաք, դուք պետք է հավատարիմ լինեք ձեր աստվածային ինքնությանը և հաստատեք մտքի ու բարոյական բարձր չափանիշների վրա հիմնված վարքի օրինակներ»:[2]

**Նախագահ Հենրի Բ. Այրինգ, Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական.** «Ողջ սրտով ես աղոթում եմ, որ ձեր հավատը աճի, որ դուք սիրառատ Աստծո դուստրն եք»:[3]

**Մերի Ն. Քուք, Երիտասարդ Կանանց գերագույն Նախագահության առաջին խորհրդական.** «Դուք, իմ սիրելի երիտասարդ կանայք, արդեն կատարել եք բազմաթիվ լավ ընտրություններ: Այժմ դուք պետք է հաստատեք առաքինության օրինակներ, որոնք կպահեն ձեզ այս ճանապարհի վրա և ձեր ողջ կյանքի ընթացքում»:[4]

**Նախագահ Դիտեր Ֆ. Ուխտդորֆ, Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական.** «Քույրեր,

